

## Թողարկումների հիմնական կանոնները

1. Պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսեր.
  - Յուրաքանչյուր ամսվա I, II, III, IV երկուշաբթի թողարկվում են համապատասխանաբար 52, 26, 39, 13 մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսեր:
  - Եթե երկուշաբթի օրը ոչ աշխատանքային օր է, ապա այդ օրվա թողարկումը տեղի չի ունենում:
  - Թողարկման նվազագույն ծավալը 500 մլն. դրամ է:
  - Կարող են իրականացվել նաև լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներն իրականացվում են կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումները՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կորրեկցիաների նպատակով:
2. Պետական (գանձապետական) միջին ժամկետայնության ուղենշային պարտատոմսեր.
  - Յուրաքանչյուր տարին մեկ անգամ թողարկվում են 3 և 5 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) միջին ժամկետայնության ուղենշային պարտատոմսեր:
  - 5 և 3 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) միջին ժամկետայնության ուղենշային պարտատոմսերի թողարկման և մարման օրն է ապրիլի 29-ը:
  - Յուրաքանչյուր ամսվա II, III երեքշաբթի տեղաբաշխվում են համապատասխանաբար 5 և 3 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) միջին ժամկետայնության ուղենշային պարտատոմսեր:
  - Այս պարտատոմսերը յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսին (մարտ, հունիս, սեպտեմբեր, դեկտեմբեր) չեն տեղաբաշխվում:
  - Եթե տեղաբաշխման օրը ոչ աշխատանքային օր է, ապա այդ օրվա տեղաբաշխումը տեղի է ունենում հաջորդ աշխատանքային օրը:
  - Տեղաբաշխման ծավալը սահմանվում է 2000-4000 մլն. դրամ սահմաններում:
3. 7 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսեր.
  - Ամեն կենտ տարի թողարկվում են 7 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսեր:
  - 7 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկման և մարման օրն է փետրվարի 17-ը:

- Տեղաբաշխման օրերն են յուրաքանչյուր եռամսյակի երկրորդ ամսվա III հինգշաբթի օրերը:
  - Եթե տեղաբաշխման օրը ոչ աշխատանքային օր է, ապա այդ օրվա տեղաբաշխումը տեղի է ունենում հաջորդ աշխատանքային օրը:
  - Տեղաբաշխման ծավալը սահմանվում է 2000-5000 մլն. դրամ սահմաններում:
4. 10 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսեր.
- Ամեն կենտ տարի թողարկվում են 10 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսեր:
  - 10 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկման և մարման օրն է փետրվարի 17-ը:
  - Տեղաբաշխման օրերն են յուրաքանչյուր եռամսյակի երրորդ ամսվա III հինգշաբթի օրերը:
  - Եթե տեղաբաշխման օրը ոչ աշխատանքային օր է, ապա այդ օրվա տեղաբաշխումը տեղի է ունենում հաջորդ աշխատանքային օրը:
  - Տեղաբաշխման ծավալը սահմանվում է 2000-5000 մլն. դրամ սահմաններում:
5. 20 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսեր.
- Ամեն նահանջ տարի թողարկվում են 20 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսեր:
  - 20 տարի մարման ժամկետ ունեցող պետական (գանձապետական) երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկման և մարման օրն է փետրվարի 17-ը:
  - Տեղաբաշխման օրերն են յուրաքանչյուր եռամսյակի երրորդ ամսվա II հինգշաբթի օրերը:
  - Եթե տեղաբաշխման օրը ոչ աշխատանքային օր է, ապա այդ օրվա տեղաբաշխումը տեղի է ունենում հաջորդ աշխատանքային օրը:
  - Տեղաբաշխման ծավալը սահմանվում է 2000-5000 մլն. դրամ սահմաններում:
6. ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնում:
7. Նոր ուղենշային պարտատոմսերը ենթակա են պարտադիր գնանշման, երբ շրջանառության մեջ դրանց ծավալը կազմում է 5000 մլն և ավելի: Մինչ այդ գնանշվում են նույն ժամկետայնությամբ վերջին թողարկման ուղենշային պարտատոմսերը: